ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի՝ 31-Ը ՀԵՌԱԿԱՆ (ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ) ՆԻՍՏԻ

ք. Երևան **«31» հունվարի 2022թ.**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառավարման խորհրդի աշխատակարգի 19-րդ կետը՝ տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) հերթական նիստը որոշվեց անցկացնել հեռակա քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա քվեարկությունը սկսվեց 2022 թվականի հունվարի 27-ին և ավարտվեց 2022 թվականի հունվարի 31-ին՝ ժամը 13^{00}-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Խորհրդի նախագահ՝

Վ. Դումանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

Խորհրդի անդամներ՝

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ռ. Գևորգյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ա. Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ս. Ալոյան - «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ա. Հակոբյան - «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն»

Քվեարկությանը չի մասնակցել՝

Ա. Բախշյան - «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Տեսչական մարմնի գործունեության 2021 թվականի տարեկան հաշվետվության նախագծին հավանություն տալու մասին:

2. Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2021 թվականի 2-րդ կիսամյակում իրականացրած աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկների հաշվետվությունը քննարկելու մասին:

3. Տեսչական մարմնի 2021 թվականի 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը հաստատելու մասին:

4. Տեսչական մարմնի 2020-2021 թվականների 4-րդ եռամսյակների կատարողականների գնահատման արդյունքների համեմատական վերլուծությունը քննարկելու վերաբերյալ:

5. Այլ հարցեր՝ Տեսչական մարմնի գործունեության 2022 թվականի տարեկան ծրագրում ներկայացված լրացումները և փոփոխությունները հաստատելու մասին:

Քվեարկության համապատասխան նյութերը ուղարկվել են խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը կայացել է:

Քվեարկության արդյունքում՝

1. Վ. Դումանյանը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկել է «կողմ»
2. Ա. Ասոյանը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
3. Ռ. Գևորգյան 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
4. Ա. Հայրապետյանը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
5. Ս. Ալոյան 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
6. Բ. Փափազյան 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
7. Ա. Հակոբյան 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերին քվեարկել է «կողմ»:

Քվեարկության արդյունքները՝

Հարց 1-ին՝ 7 «կողմ»:
Հարց 2-րդ՝ 7 «կողմ»:
Հարց 3-րդ՝ 7 «կողմ»:
Հարց 4-րդ՝ 7 «կողմ»:
Հարց 5-րդ՝ 7 «կողմ»:

Այսպիսով, տեսչական մարմնի խորհրդի հեռակա նիստին մասնակցած 7 անդամներից 7-ը օրակարգի 5 հարցերին քվեարկել են «կողմ»:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո խորհուրդը որոշեց.

Հարց 1. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2021 թվականի տարեկան հաշվետվությանը:

Հարց 2. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2021 թվականի 2-րդ կիսամյակում իրականացրած աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկների հաշվետվությանը:

Հարց 3. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021 թվականի 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

Հարց 4. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2020-2021 թվականների 4-րդ եռամսյակների կատարողականների գնահատման արդյունքների համեմատական վերլուծությանը:

Հարց 5. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2022 թվականի տարեկան ծրագրի լրացումները և փոփոխությունները:

Խորհրդի նախագահ՝ _____ **Վ. Դումանյան**
Ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝ _____ **Ա. Գևորգյան**
Ստորագրություն